«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Քնարական հերոսի ներաշխարհի բացահայտումը Տերյանի բանաստեղծական շարքերում

ԱՌԱՐԿԱ - Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ – Շահանդուխտ Եղիազարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի N 5 միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Քնարական հերոսի ներաշխարհի բացահայտումը Տերյանի բանաստեղծական շարքերում.....5

Եզրակացություն.....22

Օգտագործված գրականության ցանկ.....23

Ներածություն

Գրականությունը մարդկության ստեղծած մնայուն արժեքներից մեկն է: Գեղարվեստական գրականությունն ունի ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն: Այն ընթերցողի հոգում արթնացնում է գեղեցիկ ու վեհ զգացումներ, մղում հերոսական արարքների: Քանի որ գրականությունը ժամանակային արվեստի ճյուղերից մեկն է, ուստի նրա ազդեցությունն սովորողի հոգեբանության վրա երևում է ժամանակի ընթացքում: Տերյանի քնարական հերոսի ներաշխարհի բացահայտումը իր ուրույն հետքը կթողնի նաև սովորողների հոգեբանության վրա, նրանց կմղի դեպի ազնիվը, վեհն ու գեղեցիկը: Այս տեսանկյունից ելնելով էլ փորձել ենք դիտարկել Տերյանի պոեզիայի հոգեբանական արժեքը:

Լինում են ժամանակներ, երբ փոքր ու մեծ մտքերով, գործերով կլանված մարդկությունը միավորվում է մի զգացումի շուրջ: Այդ զգացումը սերն է: Տերյանի պոետիկայի առանցքում երազը-պատրանքը-տեսիլը շրջանառող մտահղանցքային բաղադրիչներ են: Իր ապրում-պատկերները բանաստեղծի հոգու անվերջ թրթռումներով, դեպի ներս հոսող իր հույզերով վերածվում է հոգեկանչի, գոհության բառե հմայիլների:

Տերյան մարդը մեր սրբության սրբոցն է, մեր վաղամեռիկ, մեր պոեզիայի հար ու հարատև շողշողուն աստղը: Նա այն բանաստեղծներից է, որ գնում է մինչև իր հերոսի հոգու հատակը, հասնում այնտեղ, որտեղից այն կողմ մեզանից յուրաքանչյուրը գտնում է իր հույզերը, ապրումները, այդ ամենի մեջ տեսնում իրեն:

Տերյանի պոեզիան ինքնաճանաչման ընթացք է. այն ընթերցողին տանում է իր աշխարհը: Մենք բանաստեղծի պես և նրա հետ մեկտեղ տեսնում ենք նրա տեսածը, զգում ենք նրա զգացածը:

Սիրո զգացողությունը մարդկային կյանքի տևողության մեջ, հարյուրամյակների ընթացքում իր գրկի մեջ է պահում մեզ՝ ընթերցողներիս: Արևոտ աշնան մեջ իր կորցրած սերը որոնող միայնակ ու թախծոտ մարդը դառնում է դեպի Տերյանը, փորձում է ճանաչել ինքն իրեն, իր զգացմունքները: Տերյանի սիրո ելևէջները ընթերցողին երբեք չեն լքում, որ տարիքում էլ նա լինի:

Մի առիթով Հ. Սահյանն ասել է. «…եթե ես տիեզերագնաց լինեի և ինձ հետ

վերցնելու միայն մի գրքի հնարավորություն տրվեր, Տերյանի գիրքը կվերցնեի[1]»:

Տերյանը կա և կմնա մեր նվիրական աղոթքը. նրա նրբագեղ մեղեդին պարուրում է մեր հոգին, նայադների պես կանչում, հմայում ընթերցողին, տանում «մի այլ եզերք»:

Տերյանն իր գրական այդքան կարճ ժամանակն ապրեց մեծ շփումների մեջ, ճանաչեց բազմաթիվ գրողների, հասարակական- քաղաքական գործիչների, բայց չկորավ այդ ժամանակի մեջ, այդ ժամանակը անվանակոչեց նաև իր անունով: Նա ժամանակակից մարդու հոգու կանչն ու ճիչն է, հայ բանաստեղծության կենդանի, հնչուն ու մնայուն ձայնը: Տերյանի պոեզիան լուսավոր թախիծ է ծնում, բայց ոչ երբեք ողբերգություն:

[1] Հ. Սահյան, Բանաստեղծությունը ծնվում է ցավից, էջ 46-47:

Քնարական հերոսի ներաշխարհի բացահայտումը Տերյանի բանաստեղծական շարքերում:

Տերյանի բանաստեղծությունների մեջ ընթերցողն զգում է իրեն քնարական հերոսի հետ նույնացած: Բանաստեղծին հասկանալու համար պետք է ճանաչել Տերյան մարդուն իր հարուստ հոգով, քնքուշ երազներով, լուսավոր ու պայծառ, սիրտ լցնող թախիծով: Այս ամենի վրա իրենց անջնջելի կնիքն են դրել հասարակությունն ու ժամանակը: Որքան էլ տխուր լինի մարդու անցյալն ու դատարկ, անլույս ու դաժան, այնուամենայնիվ այն կա և մնում է հավերժ ցանկալի ու ձգող այն եզրը, որն անցել է ու դարձել անդարձ: Յուրաքանչյուր մարդու կյանքում էլ պետք է վրա հասնի այն պահը, երբ նա պիտի օրհնի ու երկրպագի իր անցյալի նույնիս ամենատխուր ու ամենացավալի պահերը, որովհետև դրանք անցած են ու էլ երբեք չեն կրկնվելու:

Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ.

Մի թովիչ երազ.

— Մեկը իմ սիրտը փշրելով անցավ

Ու հեգնությունով նայում է վրաս:

Սակայն բանաստեղծը թափանցում է իր հերոսի հոգու խորքերը, հայտնաբերում նրա հոգու հարստությունը: Այն, ինչը կյանքում այնքան ցավով է պատել նրա հոգին, այժմ օրհնանքի է արժանի, քանի որ այդ հուշերն ու ցաված սերերն են լցրել նրա սիրտը, պաշտպանել դատարկությունից:

Մեկը իմ սիրտը փշրելով անցավ.

Օ՜, քաղցր արբանք:

Անտարբեր է աշխարհը. մարդկանցից յորաքանչյուրը իր հոգսի, իր ցավի հետ է: Մարդկային հասարակության մեջ չկա ջերմություն, լույս, այն նման է անապատի, որ մարդու մեջ մեռցնում է լուսավորը, գեղեցիկը, մարդուց խլում խինդն ու անուշ երգերը, մենակությունն է տիրում աշխարհում:

Բյուր մարդոց մեջ,

Պաղ մարդոց մեջ,

Որպես տրտում

Անապատում

Մենակությու՛ն,

Մենակությու՛ն...

Ու սրան պտք է հետևի փախուստը « պաղ մարդոց աշխարհից » ու աղմկոտ քաղաքից, թափառականի ոգի պիտի արթնանա ներսում ու տանի նրան կանաչ դաշտերը, ուր նա պիտի գտնի վայելքն իսկական, կարկաչող ջրի լացը լսի, գրկի ջերմ հողն ու երազի լավ կյանքի մասին.

Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց,

Պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ,

Լայն երկնքի տակ հաշտ ու սրտաբաց

Քնքուշ ծաղկանց հետ խաղաղ կքնեմ...

(«Թափառական»)

Թվում է, թե գտնված է երջանկությունը, բայց Տերյանի քնարական հերոսն անչափ մարդասեր է, նրան չի կարող երկար գրավել այդ կյանքը: Նրա մեջ շատ շուտով կարթնանա մարդու կարոտը ու կհասկացնի նրան, որ առանց մարդու ապրել չի կարող. անմարդ աշխարհում քարի պես լռող մենակությունն ծանր ու տանջալից է:

Տերյանի սիրած պահը իրիկնամուտն է, մթնշաղը: Օրվա այդ պահին մարդն այնքան շատ հույսեր ունի կապված վաղվա օրվա հետ, բայց ամենից առաջ դա այն պահն է, երբ լռել են օրվա դաժան աղմուկները, երբ երկնքում աստղեր են, ու մարդուն այցելում է երազանքը: Օրվա աղմուկներից հոգնած մարդու հոգու համար փրկության ժամ է իրիկունը: Մթնշաղի պահի մեջ է, որ մարդ ունենում է ընդհանրապես կյանքի հավերժության գիտակցումը: Մի պահ թվում է, թե մարդկային կյանքն անսահման ու անեզր է:

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,

Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,

Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,

Ցնորում է կապույտ մութի աշխարհում...

... Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ-

Ու ողջ կյա՛նքդ — մի անսահման քաղցր նինջ...

(«Մթնշաղ»)

Ընթերցողն էլ է համակվում մթնշաղային տրամադրությամբ, երազով ու կարոտով: Մի տեսակ էլեգիական հանդարտություն ու մեղմություն ես զգում, որ դժվար է բառերի փեխարկել: Կարծես քո հոգու սեփական ձայնը լինի, ասես քո երազների ու անուրջների թարգմանն է դարձել բանաստեղծը:

Սերը Տերյանի պոեզիայում ընդհանրապես և հատկապես «Մթնշաղի անուրջներում» հանդես է գալիս որպես մարդկային հոգու ամենախոր, ամենատիրական զգացումը: Կարոտը, տառապանքը, սպասումը գալիս են լրացնելու, կատարյալ դարձնելու այն: Անջատումը, լքվածությունը, միայնության զգացումը ծնվում են սիրուց ու քայլում են նրա հետ կողք կողքի:

Ով իր կյանքում գեթ մեկ անգամ սիրել է նրան հարազատ է «Էստոնական երգը»: Այս բանաստեղծությունն ունեցել է իր անհատական ակունքները, բայց Տերյանի գրչի տակ դարձել է համամարդկային զգացում: Այն ամբողջապես լցված է հեռացումի, բաժանման տագնապով, բայց նաև անսահման սիրով ու ներողամտությամբ: Մեծ սիրո առջև վերացել են շատ ու շատ զգացումներ և այստեղ է, որ մարդ կարող է մոռանալ ամեն ինչ ու ասել.

Եթե հեռվում ճակատագիրն անհոգի
Սիրտըդ մատնե անկարեկից տանջանքի,
Օ՜, գիտեցիր, իմ հոգին էլ կըցավի
Անմխիթար մորմոքումից քո ցավի...

(«Էստոնական երգ»)

Այս տողերում զգացվում է լքված հոգիների դրամա, տառապած ու տանջված մարդն է այստեղ: Այս է պատճառը, որ Տերյանի քնարական հերոսը գծում է գալիք ցանկալի պատկերները: Միախառնվում են զղջումն ու թախիծը, հանդիպման բերկրանքը, գթությունն ու ներումը:

Մի օր առհավետ կյանքս կանիծեմ
Ու գունատ հույսի քայլերով տարտամ
Կըգտնեմ ուղին հեռավոր քո տան
Եվ թույլ ձեռներով դուռըդ կըծեծեմ:

(«Դարձ»)

Այս բանաստեղծության միջոցով Տերյանը մի ամբողջ մարդկային ճակատագիր

է պատկերել: Տերյանի քնարական հերոսը դարձի ուղիներ է փնտրում: Ինչքան էլ անհույս ու հեռավոր լինի սիրածի տան ճանապարհը, նա կգտնի: Քնարական հերոսի սիրտը կարոտ է ամոքման ու անկեղծ արցունքների: Բանաստեղծը թափանցում է մարդկային հոգու խորքը և պատմում իր պատմությունը այդ հոգու բազում ծալքերի, խորհուրդների ու որոնումների մասին: Կարոտած սրտի կանչը պիտի հաշտվի ինքն իր հետ: Տերյանի սիրո երգերը մեծ մասամբ ծավալվում են ոչ թե ներկայում, այլ անցյալի ու ապագայի մեջ: Քնարական հերոսի ու հերոսուհու հանդիպումը տեղի է ունեցել անցյալում, բայց վրա է հասել անխուսափելի բաժանումը: Հերոսի հոգում ծնվել է կարոտ, միասին լինելու անսահման տենչ: Նրանք աստղերի պես հավերժ միասին են, բայց և աստղերի պես միշտ բաժան: Սա է մարդկային կյանքն ու հոգեբանությունը:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու.
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար...

(«Ֆատում»)

Տերյանի քնարական հերոսն ապրել է սիրո, կարոտի բոլոր պահերը, մերժման ու հրաժեշտի դառնությունը, հիասթափություն ու սիրած մարդուն ճանաչելու անզորություն: Եկել է մի պահ, որ նա հասկացել է՝ այն ինչ իրեն թվացել է իրական, իրականում ցնորք է եղել միայն: Այս ամենով հանդերձ սերը մնում է որպես ամենագեղեցիկն ու արժեքավորը մարդու հոգում: Որքան էլ կյանքը հիասթափեցնի ու կարծրացնի սիրտը, այնուամենայնիվ հոգու ծալքերում՝ լուսավոր մի անկյունում, անեղծ պահված է սիրած կնոջ պատկերը: Սերը դառնում է այն լուսավոր կետը, որ փարոս պետք է լինի «սուտ կյանքի ու դառը մահու դեմ»: Սիրտը չի կարող մոռանալ այն, ինչ կյանքում առաջինն է ու այնքան անրջային:

Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ —
Սև օրեր ես դեռ շա՛տ կըտեսնեմ.
Անունըդ թող փարոս լինի ինձ
Սուտ կյանքի և դառը մահու դէմ…

(«Իմ խաղաղ երեկոն»)

Կարդալով այս բանաստեղծությունները՝ մտածում ես՝ ինչ լավ է, որ աշխարհում կա սերը՝ տանջանքի, բեկումի ու թախծի դեմ հավասարազոր և ավելին, նրանց հաղթած մարդու ապավենը: «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի բոլոր բանաստեղծությունները մի – մի անրջանք են, բյուրեղացած երազանքների պահեր, մարդկային հոգու ամենանուրբ, ամենախոր բանաստեղծականացված պատկերներ:

Եվ որքան էլ Տերյանը մթնշաղ ու մշուշ երգի, որքան էլ նրա հիվանդ հոգին չուզենա հիշել անցած հույզերն ու տառապանքներն, որքան էլ անհավատ լինի նա և կասկածի, որ իր հոգու համար այլև արշալույսներ չկան, այնուամենայնիվ «Մթնշաղի անուրջները» իր մեջ այնքան լուսավոր թախիծ է ներառել, որ մենք ավելի շատ լուսավորվում ենք, նորովի ու գեղեցիկ ապրելու ցանկություն ունենում, մեր զացմունքներն ու երազանքները հղկելու, ազնվացնելու անհրաժեշտություն զգում: Սրտմաշուկ տխրությունը մեր հոգում մի կարճատև ընթացք է ունենում, այն ի վերջո նստվածք է տալիս մեր մեջ որպես գեղեցկություն, մաքուր սիրո ձգտում ու անրջանք: Եթե «Մթնշաղի անուրջներում» հերոսի հոգին ձգտում էր դեպի անրջայինը, մթնշաղը, քնքուշն ու երազայինը, ապա «Գիշեր և հուշերում» մարդկային հոգին փոթորկվում է, և «չկա դարձի արահետ»:

Քնարական հերոսը ձգտում է միայնության ու առանձնության, իսկ նրա սիրած պահը մթնշաղից դառնում է գիշերը, որտեղ ցաված հոգին հիշում է անցյալի գեղեցիկ հուշերը և տեսնում դառը ներկան: Երազներն ու հուշերն արթնանում են գիշերվա պահին, ուր ամեն ինչ սև մշուշի մեջ է թաղված, չկա ոչ մի լուսավոր կետ, որ ապավեն դառնա մարդու հոգուն: Գիշերվա այդ պահի մեջ բանաստեղծը ափսոսում է իր անուրջների ու հույսերի կորուստը: Ոչ թե երազներն են պատում նրա հոգին, այլ դառը հուշերը, որը անասելի ցավ է պատճառում, բզկտում է հոգին և հիշեցնում, թե ամեն ինչ մնացել է հետևում, իսկ ներկան համատարած մշուշ է ու թախիծ: Այնպիսի թախիծ, որը սիրտ է ճնշում և «ֆիզիկական ցավ» պատճառում:

Գիշերը մի նոր աշխարհ է բացում բանաստեղծի երևակայության համար, արթնացնում է հուշեր՝ անցած, արդեն տեսիլ դարձած: Քնարական հերոսը մոլորված է կյանքի լաբիրինթոսում, խստասիրտ ու օտար մարդկանց մեջ: Եթե «Մթնշաղի անուրջներում» կարոտը սիրո, երազի, քնքուշ անուրջների էր փոխարկվում, ապա այստեղ՝ «Գիշեր և հուշեր» շարքում, դառնում է այրված հոգու համար տանջալից մի

ապրում, մարում է վերջին աղոտ հույսը, և ամեն ինչ սուզվում է խավարի մեջ, իսկ հոգին տվայտում է այդ անորոշությունից:

Կանգնած եմ նորից ահեղ անտառում
Ճանապարհների բաժանումի մոտ.
Հանգչում են վերջին կրակներն աղոտ,
Ու մութն է կրկին իջնում ու փռվում...

(«Ճամփաբաժան»)

Սա տառապող ու իր ուղին չգտնող մարդու հոգեվիճակն է, որը չնայած այս համատարած անհուսությանը, որոնում է դուրս գալու փրկության ուղի, բայց ելք չի գտնում: Միտքը պտտվում է հուշերի, խոհերի ու մոռացված երազների շուրջ: Այս վաղեմի անուրջները նրան չեն սփոփում, այլ նետում են տրտմության ու միայնության գիրկը և հավերժ մոռացության են մատնվում «Մթնշաղի անուրջներում» երևացող «արևոտ ուղիները»:

Սև խոհեր անսպառ, անհամա՛ր, անհամա՛ր,
Սև գիշեր, և՛ հուշեր և՛ հուշեր ընդունայն,
Երազներ իմ անդարձ — ծաղիկներ իմ գարնան.
Ի՛նչ կանչով ձեզ կանչեմ, ի՛նչպես լամ ձեզ համար:

Այս անդարձ երազների, գարնան ծաղիկների հիշողությունը լցնում է մարդու հոգին ու կարծես լալու ցանկություն է արթնանում, և դառնում է շարքի տիրապետող տրամադրությունը: Այս բանաստեղծությունը կարդալիս մի անասելի թախիծ է սողոսկում սիրտդ, ճնշում, անցած ու անդարձ երազները, չիրականացած հույսերը միալար բզզոցով հիշեցնում են, որ իրենք էլ ապրելու իրավունք ունեն, ու այդ ամենից ծնվում է միայնության զգացումը: Ի վերջո մարդը չի կարող այդ սև գիշերի ու հուշերի մեջ ապրել երկար, հոգին կարոտում է հանգստության, մեղմության: Գիշերային պահի մեջ լռում են բոլոր աղմուկները, ջրերը մեղմ երգում են, իսկ սիրտը կարոտ է հանդարտության:

Գիշերը հանգստություն է բերել նույնիսկ հեռավոր աստղերին:

Նվարդ Թումանյանը իր հուշերում պատմում է, որ Տերյանը անտարբեր չէր դեպի աստղերը և հմայված էր նրանցով[2]:

[2] Տե՛ս, Վ. Տրյանը ‹‹Ժամանակակիցների հուշերում››: Եր. 1964 թ., էջ 68:

Հանգչում է վաղուց անտուն ու մոլոր
Թափառականը մեն ու տարագիր,
Աստղերը խմբով երգում են օրոր,
— Սիրտ իմ, հանդարտի՛ր...

(«Ինքնօրորում»)

Սա միայն մի պահի զգացողություն է: Այնուհետև ամբողջ շարքում նորից ձգվում է միայնության, տառապանքի, գիշերվա ու թախծի տրամադրությունը: Միայնություն, որ ծնում է մարդկանցից հեռանալու մթին խոհեր, և ալեկոծ հոգին սփոփանք է գտնում դալուկ վարդերի ու մարած հուշերում: Քնարական հերոսը անկարող է ապրել այս աշխարհում, որտեղ կորցրել է սերը, ու հոգու համար միակ փրկությունը դառնում է հեկեկանքն ու ամայի դաշտը, ուր հուշերն ավելի են սրվում, և մենակությունն ավելի ճնշիչ է դառնում:

Անծիր աշխարհի դժկամ ու դաժան
Ուղիների մեջ իմ սերը կորած
Էլ չըորոնեմ: Մթնում մոլորված՝
Դառը խոհերըս գրկեմ հեկեկամ,
Անվե՛րջ հեկեկամ...

Հոգեկան այս ճնշող մթնոլորտը մարմնական ցավ է պատճառում: Մարդն ակամա փրկության խարիսխ է որոնում, թեկուզ ոչ ճշմարիտ, որ գոնե սուտ հուշերով մխիթարվի: Տերյանի քնարակ հերոսը հոգեկան մաքառումների, տվայտանքների, որոնումների, վերելքի ու անկումների մեջ է: Նա իրեն օտար է զգում շրջապատից, մարդիկ անտարբեր են ու չար, մեռնում են երազները: Նրանք չեն ուզում հասկանալ իրենց նմանի թախիծը. այդ թախծից ծնվում են ցաված երգերը:

Մարդոց երկրում անտարբեր,
Ցուրտ աշխարհում, արդյոք ո՞վ
Կընդունե ձեզ զգվանքով,
Իմ երազնե՛ր, իմ երգե՛ր...

(«Իմ երգերին»)

Մենակության մեջ, անքուն գիշերներին, երբ մարդ մեծ ցանկություն ունի ամեն ինչ մոռանալու, սրվում են հայրենի դաշտերի ու արտերի կարոտը, հիշողությունը

այն ցնորք-աղջկա մասին: Քնարական հերոսը ցավով է հիշում «լուսե ու անուշ տխրությունը»: Այս ամենը նրան հոգեկան ցավ է պատճառում, ցավ է պատճառում այն ամենը, որ անցյալ է դարձել ու հիմա չկա: Իսկ ո՞րն է ելքը: Այս հարցի պատասխանը բանաստեղծը տալիս է «Ոսկի հեքիաթ» և «Վերադարձ» շարքերում: Անհետ ու արագ անցնում են տարիները, իսկ քնարական հերոսի հոգում անուշ երազները մոխրի են փոխարկվել:

Տարիներն արագ, ամպերի նման, անցնում են անհետ,–
Մոխիր է հիմա իմ հոգում անուշ երազների տեղ.
Բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այնտեղ,
Եվ այն, ինչ քաղցր էր, մաքուր էր, երազ,– ննջել է հավետ:

«Գիշեր և հուշեր» շարքում աշնան բնանկարը ձուլվել է քնարական հերոսի հոգեվիճակի հետ: Այստեղ հարազատ են նրան և աշնանային անձրևը, և հարավից փչող քամին, որոնք համընկնում են նրա մեռած երազանքներին ու ցաված հուշերին:

Տերյանը Անթառամ Միսկարյանին գրած մի նամակում ասում է. «Մոսկվայում արդեն իսկական աշուն է, հոգիդ ճմլում է ինչ -որ տրտմություն, պատճառազուրկ ու խորունկ: Երեկոն ձգվում է երկար և գիշերն անձայն է, լուռ, ծանր: Ունկնդիր ես ինում անձրևի երգին, կաթիլների անլռելի, ձանձրալի զրույցին ու գիշերի անսահման լռությանը և թվում է, թե դա վաղուց այդպես է, շատ վաղուց, և որ այդպես էլ պետք է լինի, այլ կերպ չի էլ կարող լինել: Եվ այդ ամենը սիրում ես ինչ-որ հիվանդագին սիրով, դրա մեջ ինչ-որ առանձնահատուկ գեղեցկություն կա, ինչ-որ տարօրինակ հմայք: Նստել եմ հիմա նամակ գրելու և մտորում եմ աշնան հմայքի ու անցյալի մասին, որ տխուր-տխուր երգի է նման: Եվ թվում է, թե վերջ չկա այդ միալար երգին, որ գաղտագողի մտնում է հոգիդ և լցնում է հուշերի մշուշով ու թախիծով[3]:»

Աշունը շատ էական է Տերյանի պոեզիայում: Նա աշնան գիշերվա մեջ է լսում «ջութակի հեկեկանքը տրտում» «մեղմ ու միաձայն» հնչյունները աշնան պատկերների հետ համաձուլվածք են կազմել բանաստեղծի հոգում և դարձել հարազատ ու մտերիմ:

Հնչում է անվերջ աշնան թախիծով
Դաշնամուրն այնտեղ, պատի հետևում.

[3] Տե՛ս Վ Տերյան, Երևան 1970 թ.,հատոր 4, էջ 339:

Հարազատ է ինձ այդ երգը հեծող —

Իմ անանց ցավով մեկն էլ է ցավում։

Աշունը բանաստեղծի հոգին լցրել է հուշերով, և աշնան նման թախծոտ է նրա հոգին։ Կյանքից երազներ չսպասող մարդու մտերիմն է դարձել աշունը իր բազմազան գույներով։

Տունը ավեր ու խավար.

Օրը անլույս,

Ո՞վ կրվառե ոսկեվառ

Երազ ու հույս...

«Աշուն»

Ապագան, ներկան ու անցյալ իրար են խառնված ու մարդու համար այլևս չկա փրկության ուղի. միակ հարազատը մնացել է աշունը՝ միգապատ ու անձրևային, որը մխիթարություն է բերում մոլորված հոգուն։ Նույնիսկ բառեր չի գտնում իր մտերմությունը արտահայտելու, բանաստեղծի հոգին կարծես դարձել է աշնան երգ, որը դյությում է նրան ու բառերի չի փոխարկվում։

Նորից անձրև, մշուշ, ամպ,

Թախիծ անհուն, տխրանք հեզ,

Աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ,

Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ…

«Գիշեր և հուշեր» շարքում սերը , սիրած աղջկա կերպարը այլ լուծում է ստանում։ Եթե «Մթնշաղի անուրջներում» սիրած էակը երևում է անրջային հրաշք-աղջկա պատկերով, ապա այստեղ այն դարձել է մի «երկդեմ մեդուզա» , որը բանաս-տեղծին հայտվում է գիշերով ու խառնում է ցավագին հուշերը։ Մեղմությունը դառնում է հոգու պահանջ, և այդ կերպ է ընկալում նա սիրո իր իդեալը։ Նա սիրած աղջկան երազում է տեսնել մերթ քույր, մերթ մայր, նրա մեջ տենում է իր ցաված սրտի ամոքողին։

Այսօր եղիր քրոջ պես —

Անչար, մաքուր և գթոտ,—

Գրկենք իրար ու նստենք,

Նստենք մինչև առավոտ…

«Մեղմություն»

Միասին լինելու բախտը քնարական հերոսին երկար տրված չէ: Տերյանը տեսնում է մարդու հոգին, ցանկանում է ամոքել այն: Ճակատագիրը մարդկանց չի ժպտացել, եղել է բաժանում, անցել են տարիներ: Ժամանակն իրենն է արել, մարդիկ ընդունակ են արդեն «անցած օրերին նայել անտարբեր սրտով»: Փոխվել է նաև հերոսի հոգեվիճակը, նա այլևս առաջվա հավատավորը չէ, իսկ անցած կյանքը կարծես ուրիշին լինի:

Տարիներն անցան, և հին օրերին
Նայում եմ ահա անտարբեր արտով,
Եվ, որպես գերին հլու իր բեռին,
Տանում եմ կյանքի օրերն անվրդով:

«Անդարձություն»

Այստեղ կա և՛ անցած օրերի նկատմամբ ափսոսանք, և՛ առանց ըմբոստության հարմարվելու կարողություն: Երազայինի ու ցանկալիի կողքին կա նաև բաժանում, որը զգայուն հոգու մեջ դառնում է կորուստ ու իր արձագանքն է թողնում: Եթե նույնիսկ կայանա հանդիպումը, միևնույնն է՝

Բայց երբեք, երբեք էլ չի վառվելու
Ցնորքս մեռած-պատկերդ հեռու:

«Գիշեր և հուշեր» շարքի բանաստեղծությունները ընթերցողի հոգին պատում են մի տեսակ անհասկանալի թախիծով, ափսոսանք ես զգում չիրականացած երազներիդ համար, որը ճնշում է սիրտդ: «Մթնշաղի անուրջների» երազային ու քնքուշ պահերից հետո մի տեսակ ցավ ես զգում, տառապում, հասկանում ես բանաստեղծի տանջանքները, բեկված երազները, կարծես դու էլ ես գիշերի ու խավարի մեջ մոլորված և ճանապարհների լաբիրինթոսում դուրս գալու ուղին չես գտնում, բայց զգում ես վեհ, սիրտ մաքրող, ազնվացնող տառապանքը, հոգուդ մեջ լսում ես աշնան ու անձրևի լացը, հասկանում ես բառերի չփոխարկված զգացումները, որոնք ամոքում են որոնում: Զգում ես այդ մեծ տառապանքը ու բանաստեղծի խոսքերն ես ակամա հիշում.

Ես տառապանքս բախտ եմ համարում
Եվ ծիծաղում եմ ձեր բախտի վրա:

Հակասական է բանաստեղծը իր հոգու բարդ շարժումներով: Եթե «Մթնշաղի անուրջներում» լուսավոր, երազային թախիծն է իշխում «Գիշեր և հուշերում» սիրտ տանջող, ցավ պատճառող թախիծը, ապա «Ոսկի հեքիաթ» շարքում այս տրամադրություններն երբեմն-երբեմն միախառնվում ու հաջորդում են իրար: Քնարական հերոսի հոգին մերթ լուսավոր է, մերթ խավար, մերթ մահն է օրհներգում, մերթ կյանքը: Տանջալից տխրությունը դարձել է անորոշ մի զգացում և այլևս ցավ չի պատճառում: Այս շարքում իրական պատկերները երբեմն դառնում են անրջային, իսկ տեսիլները՝ իրական: Բանաստռեղծը այս շարքի համար բնաբան է վերցրել Տյուտչևից՝ «ԵՎ ես տեսա մի նոր աշխարհ» տողը: Այդ որ աշխարհի մասին է խոսքը, որ տեսել է նա: Նրա տեսածը նոր աշխարհի սահմանագիծ է, որից դուրս է եկել բանաստեղծը:

Շարքը սկսվում է «Հատված» բանաստեղծությամբ, ուր համատարած թախիծն է իշխում: Առօրյա հոգսերը մոռացած բանաստեղծի հոգին ճնշում են չիրականացած ցանկությունները: Միակ սփոփիչ վայրը գերեզմանն է, որը «մայրական գիրկ» է թվում: Բայց կարծես թե մի լույս է իջնում, և նա գտնում է իր վիճակն ու երազները հասկացող մի հարազատ հոգի:

Թվաց, որ մեկը իմ ցավն է երգում,
Իմ լացն է լսում,
Իմ լռությունն է զգվում իր գրկում.—
Եվ իր մեծ հոգում,
Իր անհուն հոգում՝
Իմ սրտից խորն է թախիծս զգում...

Բանաստեղծը կյանքի ժխտումից գնում է մի նոր աշխարհ, լցվում սիրով ամեն ինչի նկատմաբ: Նախկին մռայլությունից փարատվել է նրա հոգին, ձգտում է դեպի նոր ուղիներ՝ իրար խառնելով երազն ու վերհուշը:

Մարգերում իջավ թովիչ կիսամութ,—
Աշխարհը նորից խորունկ է և լայն.
Սահեց լուսնյակի ցոլքը ծածանուտ,
Ու սև ջրերում աստղերը ելան...

«Գիշերամուտ»

Այս տրամադրության փոփոխությանը հաղորդակից է լինում բնությունը իր զարթոնքով: Հանդարտված ու իր հանգիստը գտած հոգին ներադաշնակ երազի մեջ է բնության հրաշալիքների հետ, և փորձում է հասկանալ իրականությունը: Իրականությունն ըմբռնած բանաստեղծի համար նույնիսկ ծաղրելի են նախկին խաբուսիկ հույսերը, միալար հնչող սիրո խոստովանությունները. «ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»: Այս ամենը հոգեկան անբավարարվածություն է պատճառում նրան: Այն, ինչն առաջ բանաստեղծության աղբյուր է եղել, այժմ հնչում է որպես «տաղտկալի, ձանձրալի պատմություն»:

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Ես քո երգը վաղուց եմ լսել…

Այժմ ավելի ակնառու է ձանձրույթը և հոգեկան անբավարարվածությունը: Քնարական հերոսի «հոգու դատարկը» լցվել է մի խաղաղ ժպիտով ու խորհրդավոր լռությամբ: Զարգացնելով հերոսի հոգեբանությունը՝ Տերյանը մի բառի միջոցով ընթերցողին է հասցնում նրա անցյալը, որն «անսովոր գիշերի» պես է եղել: Նա չգիտի՝ երբ է վառվել այդ հուրը իր հոգում, և անցյալը այդ պահից ստացել է այլ գույներ:

Շուրջըս մռայլ էր, և հեռուն մութ,—
Նա իմ սև կյանքում վառեց մի հուր,—
Ամեն ինչ թվաց հեքիաթ ու սուտ,
Չըգիտեմ՝ ե՞րբ էր, չըգիտեմ՝ ո՞ւր...

Անրջային ու անճանաչելի սիրո էակը ապրելու նոր տենչ է ներշնչել: Սիրո առանկան զրկված է շոշափելի գծերից, այն երազ է, որը երբեք չի էլ եղել:

Այստեղ ամեն օր տխրությամբ երկար
Իմ սիրտը քեզ է երազում, և այն,
Եվ այն, որ չկա՛ր, և այն, որ չկա՛ր...

Այս տրամադրությունը հարազատ է «Ոսկի հեքիաթ» շարքին: Օրվա իր սիրած պահին՝ մթնշաղին, «ունայն օրերից» հոգնած բանաստեղծին ամոքում է բերում անրջային մի էակ, որի փայփայանքն ու համբույրն էլ սովորական չեն:

Ընդունում եմ քո համբույրը նրբին,
Ուրվականային փայփայանքըդ ես,

Երբ լույս է և մութ — մթնշաղ, երբ իմ
Ցնորքը հիվանդ հնազանդ է քեզ.
«Ուրվական»

Անրջայինին ու երազայինին այս շարքում փոխարինելու են գալիս իրական, կենդանի կնոջ կերպարը, որի ցավով ու վշտով լցված է բանաստեղծի հոգին, և այդ ցավը մեղմելու համար պատրաստ է ամեն ինչի: Զգում ես կյանքի ուղիներում մոլորված կնոջը, որի կյանքը ձգվել է միայնության մեջ: Արտաքին աշխարհն էլ նպաստել է այդ ալեկոծված հոգու միայնությանը: Մեծ ալեկոծությունից հետո հոգին կարոտ է քնքուշ ու մեղմ խոսքերի. նա ապավեն է փնտրում կյանքում:

Թող ցոլա, մեղմորեն
Այս հուրը տխրաբոց,
Թող, որ մեղմ օրորեմ
Քո հոգին ալեկոծ:
Լուսեղեն այն խոսքով,
Որ այսօր ես գիտեմ...

Հիվանդ հոգին փնտրում է մարդուն հզորացնող, հոգուն լույս նետող զգացումը՝ սերը: Սերը հալածում է հոգու խավարը, լուսավորում կյանքի ուղին ու աշխարհը: Նա մի ամուր պատնեշ է ստեղծում սիրող սրտերի համար:

Եվ քո փայլով իմ աշխարհը լուսացավ,
Չընկան վիհերն իր անել,
Քաղցր է հիմա, լուսավառված, խինդ ու ցավ.
— Ո՞վ կարող է ինձ քեզանից բաժանել...

Հաճելի ու ցանկալի հանդիպումը ցրում է հոգու մառախուղը, լույս նետում ցաված հոգիներին: Երկար երազված հանդիպումը մոռացնել է տալիս առօրյան, ցրում է թախիծը, իսկ տառապանքը դառնում է «քաղցր հուշ»:

Դու կգաս ու կրկին հեքիաթով կդյութես,
Լուսերես կըցրես մառախուղն իմ հոգու,
Ոսկեշող հայացքով և քնքուշ խոսքերով, որ գիտես միայն դու:
«Դու կգաս»:

Այս ամենը մտածել են տալիս աշխարհում կատարվող լավի ու վատի մասին:

Չըգիտեմ՝ այս տխուր աշխարհում
Ո՛րն է լավ, ո՛րը՝ վատ.
Ես սիրում եմ աչքերըդ խոհուն
Եվ խոսքերըդ վհատ...

Այս մի հատիկ «չգիտեմը» կյանքի իմաստությանը հասած մարդու խոսքն է: Նա գիտի, որ այդ ամենի մեջ ամենից լավը սերն է, անկախ այն ներշնչողից: Սերը ներշնչողը այստեղ կապ չունի, բանաստեղծն իր սերն է սիրում:

Միայնակ՝ ես սիրում եմ նստել
Երերուն լույսերում,
Ես սիրում եմ երազ ու ստվեր.—
Ես իմ սերն եմ սիրում...

Ավարտելով «Ոսկե հեքիաթ» շարքը՝ քեզ զգում ես հրաշք երազում, ուր ամեն ինչ դյութող է, բայց չունի անուն: Անասելի ցանկություն ես ունենում նստել մարած լույսերի մեջ ու անվերջ անրջել՝ վախենալով, որ այդքան թովիչ ու անաղարտ երազդ լույսերի հետ կարող է ցնդել, ու դու էլ կարող ես բանաստեղծի նման մնալ մեն-մենակ: Մի խորհրդավոր թախիծով է համակվում հոգիդ, ու անբացատրելի մի կարոտ ես զգում, նույնիսկ չգիտես էլ, թե ինչի նկատմամբ, բայց այդ թախիծն ու կարոտը ցավ չեն պատճառում, այլ վեհացնում են զգացմունքներդ: Դու էլ սկսում ես մտածել այն աշխարհի մասին, որտեղ ապրում ես: Այս աշխարհում էլ քեզ օգնում է երազող Տերյանը: Այս պահին մոռանում ես ամեն ինչ, հոգիդ լցվում է անանուն ինչ-որ զգացումով, որին անուն տալ չես կարող. չգիտես տխրություն է այդ, ուրախություն թե երազ:

Այս տրամադրությունները շարունակվում են «Ոսկե շղթա» շարքում, որը բանաստեղծի կենդանության օրոք լույս չի տեսել: Հակասական են բանաստեղծի ապրումները: Մերթ լուսավոր է ու ջինջ, մերթ անզոր ու անզեն ինքն իր դեմ: Գիշերը նորից ծնում է մռայլ խոհեր և մենություն է բերում: Կյանքը դառնանում է ու աշխարհը չարությամբ է պատվում:

Մեր կյանքը դառն է, մեր օրը մութ է,
Անզոր են, զուր են վեճն ու կասկածը.

Բոլորը ծաղր է, բոլորը սուտ է,

Չարն է, որ տեր է, չարն ինքն աստված է։

Այս հուսահատության մեջ բանաստեղծը չի նզովում աշխարհը։ Հոգու մեծ ուժով նա վերածնվում է ու օրհնում այս ցավերը ու ցավի միջից էլ խնդություն ու առավոտ է երգում։ Տրամադրությունները միաձուլվում են իրար. ուրախությունը լացի է նման, իսկ լացը՝ ուրախության։

Սիրտ իմ, բաց ես աշխարհի և չարի դեմ, սիրտ իմ՝ բա՛ց

Աշխարհն արև, աշխարհն ամպ, սիրտ աղբյուր ես դու զուլալ։

Անսահման սիրող ու ներող բանաստեղծը պատրաստ է տանել կյանքի ամեն մի դառնություն, միայն մի պայմանով, եթե այս աշխարհում կա սերը։

Եթե սեր չկա-ինչի համար

Պիտի չարչարվեմ չար աշխարհում.-

Կգնամ հողի գիրկը խավար,

Կըլռեմ,որպես քարն է լռում...

Այս ամենը անզորությամբ են լցնում բանաստեղծի հոգին, հուշերը ցավ են պատճառում։ Սակայն մարդասեր բանաստեղծը չի նզովում աշխարհը, նույնիսկ այն պահին, երբ գիտակցում է նույնիսկ իր մահը։ Մոտալուտ մահվան միտքը չարությամբ չի լցնում նրա սիրտը։ Նա ավելի իմաստուն, սիրառատ ու բարի է դառնում։ Չարության ոչ մի հետք չկա նրա հոգում։ Կյանքից հեռանում է՝ բարություն ու սեր թողնելով, հավատալով կյանքի հավերժ ու նորոգ ընթացքին։

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,

Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով։

Բանաստեղծը ցավը պահեց իրեն, լույսն ու ջերմությունը տվեց մարդկանց։

Դու էլ ես թախծում, բայց լույսով, հույսով ու ջերմությամբ է շնչում հոգիդ, ավելի սիրառատ ու բարի ես դառնում։ Հավատում ես, որ կանցնեն բոլորը, կգան ու կգնան օրերը։

Մարդկային հոգու գեղեցկությունների բացահայտման մեծ վարպետ է Տերյանը։ Բանաստեղծությունների մեջ նա հասել է մի բարձրության, որն ընթերցողին երկմտանքի մեջ է պահում։ Ի՞նչն է նրա բանաստեղծությունների գաղտնիքը, որ այդքան հուզում և գրավում է մեզ։ Նա առօրեական նյութի բացահայտման միջոցով

պատկերում է հոգեբանական նուրբ պահեր: Սիրո հոգեբանության բացահայտման մեջ էլ նա նյութ է վերցնում առօրյա երևույթներից՝ թափանցելով մարդկային հոգու խորքերը: Մենակությունը քարի պես նստած է նրա սրտում, հանդիպումը ցանկալի է ու անցյալից ոչինչ չի մտաբերում: Նա ապրում է սիրած աղջկան հեռվից տեսնելու հույսով:

Ձեր դռան առաջ կանգնում եմ երկար,—
Գուցե դու հանկարծ «պատահմամբ» դուրս գաս,
Կարոտես, գուցե, դու հանկարծ զգաս
Եվ հասկանաս իմ հուզումը տխուր:

Հասկանալի է այս հուզումը, միանգամայն մարդկային:

Սակայն ուզում եմ, որ ինձ չտեսնես,
Չգիտեմ ինչո՛ւ ձեր զանգն եմ տալիս,
Փախչում եմ... փախչում... և հեռանալիս
Փառաբանում եմ, օրհներգում եմ քեզ...

Սա շատ պարզ ու մարդկային մի ցանկություն է, տարագիր սրտի կանչ, որ կարող է ունենալ մեզանից յուրաքանչյուրը: Գիշերը սրում է անրջանքները, ապրելու պահանջ առաջացնում մարդու հոգում: Սովորական թվացող ձմռան պատկերի միջոցով Տերյանը թափանցել է մարդկային հոգու խորքերը: Ցանկալին ու երազայինը միշտ անհասանելի-հեռավոր են թվում: Մարդիկ շատ հաճախ չեն նկատում իրենց կողքին ապրողներին, իրենց համար տառապողներին ու «արև բախտի երազ են տեսնում» այլ ափերում: Հուշն է արթնանում ու հոգուդ հանգիստ չի տալիս: Մտաբերում ես անցյալը, որը մի ակնթարթի պես է անցել, բայց իրենից հետո թողել է ոսկեղեն երազ, ու այդ երազն էլ լիցքեր է տալիս հոգուդ, հեշտացնում է ապրելը: Հիշողություն է դարձել անկրակ սենյակն ու պատերի դյութանքը, բայց առօրյան մնացել է:

Եվ խավարում, խավարում
Հիշո՞ւմ ես ջերմ շուրթերի
Հանդիպումը հրահրուն,-
Հուզմունքն արբած սրտերի...

Տերյանի ստեղծագործությունը մարդկային հոգին է իր բոլոր կողմերով, իր

ելևէջումներով ու մակընթացություններով: Այն կհուզի բոլոր ժամանակների մարդկանց՝ բերելով նրանգ հոգուն անդորր, կսովորեցնի ու նույնիսկ կստիպի առօրյայից դուրս գալ դեպի բարձր երազի ոլորտները: Մինչև Տերյանը մեր բանաստեղծներից ոչ մեկին չի հաջողվել թափանցել մարդկային հոգու խորքերը, բացահայտել նրա անկումներն ու վերելքները:

Եզրակացություն

Տերյանը մտածում և ստեղծագործում էր ոչ միայն առանձին բանաստեղծությունների, այլև շարքերի միջոցով: Շարքի մեջ մտնող յուրաքանչյուր բանաստեղծություն ներքին կապ ունի քնարական շարքի ընդհանուր մոտիվների ու տրամադրությունների հետ: Իր հերթին շարքի մեջ մտնող յուրաքանչյուր բանաստեղծություն նրանից դուրս կարող է ընկալվել որպես առանձին ստեղծագործություն: Այդպիսին են նաև Տերյանի բանաստեղծությունները:

Տերյան իր շարքերում բնապատկերը դարձրեց տրամադրության արտահայտություն: Այդ բնապատկերները նրա քննարերգության մեջ որոշակի հոգեբանական վիճակ է՝ թախիծ, տրտմություն, սիրո հրաժեշտ, կյանքի անցողիկություն: Բնությունը իրական աշխարհի արտացոլումն է, իսկ բանաստեղծի համար այն ցնորք է, երազ, տեսիլք: Այդպես և՛ աշունը, և՛ անձրևը, և՛ պատուհանի տակ մրսող տերևաթափ ծառը: Տերյանը բացառիկ նրբագեղությամբ, անթերի հնչեղության հասցրեց խոսքի երաժշտականությունը:

Հայ ժողովրդի բնորոշ հավատը առկա էր նաև Տերյանի հոգուն: Նա փայփայում էր, որ մի օր տուն կվերադառնա, պայքարում էր այդ երազի համար, երազում էր, որ հայրենիքը երազի չվերածվի: Տերյանի հոգում պայծառ լուսաստղի պես միշտ կենդանի էր տունդարձի տենչը:

Վերադարձավ, հուզեց, ապրեցրեց…

Իսահակյանի բառերով ասած. «Տերյանի բանաստեղծություններից անվիճելի մի քանակ կմնա որպես հավերժական արժեք բոլոր ժամանակների համար, որպես մարդկային բյուրեղացած զգացմունքներ և անխառն գեղեցկություններ[4]»:

[4] Տե՛ս Ավ. Իսահակյան, Երևան 1977 թ., հ. 5, էջ 278:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Երևան, 1972:
2. Վ. Տերյանը «ժամանակակիցների հուշերում», Երևան, 1964:
3. Վ. Տերյան, Երևան, 1970, հատոր 4:
4. Ավ. Իսահակյան, Երևան, 1977, հատոր 5:
5. Հ. Սահյան, «Բանաստեղծությունը ծնվում է ցավից», Երևան, 1984: